

Հայկական գիտակիետագութական համակառյց  
Armenian Research & Academic Repository



Այս աշխատանքը պրեսերվացիա և թղթապատճենական ձևաչափներ  
սահմանադրությունը կոչվում է CC-BY-NC-SA 3.0 արշանագրավ

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial-ShareAlike 3.0 Unported License.

Դա էլեկտրոնային հայտագրություն է:

Կայուն է և անփոփոխ է պահպանվում էլեկտրոնային համակարգությունում:

You are free to:

Համար - <http://arar.am/> / <https://doi.org/10.5281/zenodo.1101010>

Խորհրդական առողջապահության համար:



Akm N3 1960 2.





1. 99

4910

U.S. ԶՈՐՅԱՆ

333 -



„ՅԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927.

645

891.93


9.-83 Գորշուն, Ար.

Հայկական համագումարից 40%


Apr. 28. 1911

399





Գիրություն չկ լցված

U.S. GOVERNMENT

ERUBENSUUPUL

891.99


9-83

645

# ՀԵՂԿՈՄԻ ՆԱԽԳԱՀ


29360

A-185509



## „ԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926.



ՏԵՐԱՆ ՀԵՐՍԵՍ.  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,  
ՄԱՐՔԻ ՓՈՂ. № 29  
ԳՐԱՌԵԴ. 418Բ.  
ՏԻՐԱԺ 2000.

11344-4210

ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԱԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# 1.

Ծանր, անհանգիստ որեր եյին, ու քանի որ  
եր քամիներ եյին փշում անընդհատ—գիշեր, ցե-  
րեկ։ Զյունը թափում եյին տանիքներից, ձյու-  
նով խփում եյին լուսամուտներին, դեղերի խո-  
տը ցըիվ եյին տալիս բակերում և վազվազում  
շարունակ։ Մերկ ծառերը, հեռագրաթելերի նման,  
նվում եյին անվերջ—հուռուռ... Յերբեմն ել  
—ոդի միջով կարծես յերկաթաթե նժույզներ  
եյին սլանում—վը՝ զզզ... Տները դողում եյին  
լուսամուտները դողում եյին, մարդիկ դողում  
եյին։

— Տեր, դու փրկես, խաչակնքում եյին պա-  
ռավախերը.—Սուրբ Սարգիսը կատաղել տ ես տա-  
րի...  
Այսոր ել նույնն ե.—Արել դեռ չի ծագել—

քամին վազում ե բոլոր փողոցներով։ մի տեղ  
շրիկացնում ե պոկվող տախտակները, մի ուրիշ  
տեղ կղմինդրը թրիկացնում ե գետին կամ տա-  
նիքի ձյունը բակը թափելով, շպրտում ե լու-  
սամուտներին, փեղկերը ցնցում ե, ծիծաղում ե

ծխնելույղներն ի վար և հետո, իր արածից կառծես զոհ՝ վազում ե դարձյալ չարախնդացությամբ, շվագացնելով՝

— Շշույտ... Ըստ... ույտ...

Չսայած դրան, սակայն սարերի արանքն ընկած փոքրիկ քաղաքը, վոր իր կղմինդրե տանիքներով նմանում է խոր ափսեյի մեջ լցրած խըմորեղենի—քնած ե տակավին։ Նրա և վոչ մի ծխնելույղից ծուխ չի բարձրանում. փողոցները դատարկ են, յեթե նկատի չառնենք այն շներին, վոր յետին թաթերի վրա նստած՝ հսկում են փողոցների ամայությունը, և այն հավերին, վոր քջում են իրիկվաճից մնացած ձիերի աղբը։

Սակայն այդ ամայի փողոցներից մեկով զնում ե ահա մի սեաշոր պառավ՝ կուզը դուրս քցած. վոչ թե զնում, ավելի շուտ քարշ ե զալիս ծերացած ագռավի նման։ Գնում ե իրանն առաջ թեքած, հովանոցի կոթը ձեռնափայտ շինած, քիթը ողի մեջ խրած, զլուխը աջ ու ձախ սասանելով... Փողոցը ձյունի ցեխ ե, քամի, հոգնում ե, դժվար ե քայլել—ախ կտրվի ծերությունը... Քայլում ե նա ու վրդով քրթմնջում ինքնին.

— Հասկանը՝ չես ես ինչ բան ա... Երեկ կաթն ու կորեկ, ախսկեր տղեք ին, եսոր՝ թուր ութվանք... Հասկանը՝ չեմ... Բարշովիկ, դաշնակցական, ել ինչ—չես իմանում... Կուսկացկութին

կուսվացկութին... Քանիսն են... Խոռվ կենտ  
ձեր դլխին ձեր կուսվացկութինը... Մինը զնում  
ա, մի ուրիշը գալի, թողը չեն մի ես խալխը  
հանգիստ վերը ընկնի... Նա նրան ա բռնում, նա  
նրան. Նա նրան, ա բռնում, նա՝ նրան...

Գնում, քարշ ե գալիս պառավը ու խոսում  
ինքնին.

— Հասկանը չեմ, ախպեր. բեյնըմս մըտ-  
նըմ չի—ինչ են տվել, վոր իրարից կարըմ չեն  
առնեն... Ասա՝ խեղճ տղեքը ձեզ ինչ ին արել,  
վոր եկաք բռնեցիք. մեղքներն ի՞նչ ա... Ասըմ  
են սկի... Հարցնում ես—խոսը ել չեն, այ ան-  
խոսն ընկնի ձեր փորը...

Խոսում ե պառավը ու գնում յերկուտակ-  
ված... Քամին խաղում ե նրա շալի հետ, քա-  
մին բարձրացնում ե նրա փեշերը կամ փաթա-  
թում ծնկերին, բայց ելի գնում ե նա, գնում ե  
փայտի ոգնությամբ։ Գնում ե փեսի մոտ, գը-  
նում ե իմանալու, թե ինչու գիշերն յեկան բռո-  
նեցին իր փորդիներին՝ Թուրենին ու Սուրենին.  
մեղքներն ի՞նչ ե... Փեսեն կամիսար եւ Ասում  
են, կամիսարների մեծը. Նա կիմանա յերեխ։

— Մի տեսնենք դա ի՞նչ ա ասըմ. բանից  
խաբար ա, թե հլե հեչ... Մի բարի պառողն ել  
դա չի, ասենք։ Բեղն ու միրուքը կլպել ա—  
խառնվել գյաղա-գյուղեքին.—աստված չկա, ժամ,

պատարագ հարկավոր չի, մեծ ու փոքր չկա—  
եղ ա դրանցը...

Քայլում ե պառավը ու խոսում դարձյալ  
Հասնում ե, վերջապես, փեսի տուն։ Կանգ~  
նում ե, ձեռի մեկը դնում ե մեջքին, ուղղվում  
ե մի քիչ ու շունչ քաշում։

— Այ ժամը ձեր դիվանն անի հա, —ա~  
սում ե սրտի խորքից ու բարձրանում փողոցի  
վրա իջնող աստիճաններով։ Հևում ե, տնքում  
ավելի բարկությունից և, վերջապես, դրանը մո~  
տենալով՝ դուռը ծեծում ե ձեռիփայտով, այսին~  
քըն հովանոցի յերկաթե կոթով։

Զայն չի դալիս։ Քնած են, ի՞նչ ե։

— Աղջի, Վերգին, — ձայն ե տալիս պառա~  
վը աղջկան բարկացած ու դուռը նորից ծեծում։  
— լսրմ չեք, աղջի...

Դարձյալ ձայն չկա։ Յերրորդ թխկոցին, վեր~  
ջապես, դրան յետև վոտնածայն ե լսվում, քիչ  
հետո՝ յերկաթի նիզի շխկոց։ Դուռը բացեց  
մազերը շաղ տված, շատպելուց շրջազգեստն ան~  
կարգ հագած մի ջահել կին, վորի կաթնագույն  
դեմքի վրա աչքի եյին ընկնում սև հոնքերը,  
վոր համարյա միացած եյին և թվում եր յեր~  
կուսը մի ամբողջություն են կազմում։ Բացեց  
դուռը և կանգնեց զարմացած։

— Մայրիկ... ի՞նչ կտ եսպես վաղ...

Պառավը տնքաց դժգոհ.

— Ի՞նչ պըտի ըլի. Հոռն ու ցավը իմ պինչըն ա... Հերիք չեր ինչ արին—վիետը տարան, | դեզի չափ տախտակը տարան—զիշերն ել յեկան ախպորտանցդ բռնեցին, աղջի...

Աղջիկը—տիկին Վերգինը զարմացած է.

— Ո՞վ, ինչու...

— Գիտեմ ինչի... Յեկան հինգ-վեց հոգով, զիշերվա կիսին սաղ տունը թառժաժ արին, խուզարկեցին, քունջ ու պուճախ ընկան ու, վերջը, ախպորտանցդ առան-տարան։ Այ գրողը տանի դրանց։ Ասում եմ՝ «ուր եք տանում, ինչ կա, ինչ մեղքի տերն են»։ Թե՝ «հետո կիմանաք»... Այ հետո կրակի գաք... Հիմի յեկել եմ, Ոսեփն ըստեղ չի, իմանամ ես ինչ խաբար ա, ինչ են տվել, վոր կարըմ չեն առնեն... Քնած ա... Դա ել քնելու վախտ ա գտել։

— Իրիկունը ուշ յեկավ, ասում ե Վերգինեն մորը և հարցնում, ավելի շուտ ինքն իրեն.

— Բայց ինչու համար պիտի բռնեն...

— Յես գիտեմ, աղջի!— պատասխանում ե մայրը բարկությամբ,— թե իմանաս, ելի դու կիմանաս. քու պարզերես մարդն ա եղ գործերի մեջ...

Վերգինեն գլուխը շարժում ե տարակուսած։ Ոսեփն իրեն բան չի ասել. զիշերն ուշ յե-

կավ ու քնեց և վոչինչ այդպիսի բան չասավ, պատասխանում է նա մտածումների մեջ։ Մտածում ե թե ինչու պիտի բռնած լինեն յեղբայրներին, ի՞նչ հանցանքի համար արդյոք։ Անցյալի։ Ճիշտ ե՝ յեղել են նրանք դաշնակցական, գործել են, բայց հիմա, հիմա չե՞ վոր վոչ մի բանի չեն խառնվում։ Ի՞նչ պետք ե արած լինեն ուրեմն… Թյուրիմացություն չե արդյոք…

Աղջիկը մտածում ե, իսկ պառավը, անհանգստությունից, բարկությունից, տեղը չի կարողանում նստել։

— Բա յԵՐՔ կը զարթնի, աղջի, — հարցնում ե նա ծեծված շան աչքերով՝ կես-խեղճացած, կես-հերսոտած, — աղջկան նայելով. — Են հարսներն ախր իրանց ուտըմ են ընտեղ-մի խաբար տանեմ ե…

Վերգինեն լուռ թեքվեց դեպի ննջասենյակի դուռը, բայց կես-ճանապարհին կանգ առավ մըտածումների մեջ, յետ յեկավ և մոտեցավ մորը։

— Կուզես, դու գնա, մայրիկ, հարսների մոտ — յես կիմանամ, — ասավ Վերգինը, աշխատելով իր անհանգստությունը թագցնել մորից. — Ոսեփը մի քիչ ուշ կը զարթնի յերեխի Դու գնա, հարսներին ասա հանգիստ մնան. վոչինչ ել չի լինի. Թող զուր չտանջեն իրենց։ Թյուրիմացություն ե յերեխի.

Վերգինեն չեր ուզում նախ՝ ամուսնու քունը  
խանգարել և յերկրորդ, չեր ուզում մանավանդ,  
վոր մայրը խոսի Ռուփի հետ. անհարմար եր—  
յեթե խոսեր՝ ավել-պակաս բաներ պիտի ասեր,  
ինչպես միշտ, անիծեր պիտի, ինչ վոր Ռուփը  
տանել չեր կարող. չեր սիրում Ռուփը այդպիսի  
խոսակցություն։ Դուր չեր գալիս։

— Հը՞ ասըմ ես բան չի ըլի՞,—հարցը եց  
պառավը Ջրակալած աչքերով։

Վերգինեն հանգստացը եց մորը.

— ԶԵ, չԵ. դու գնա, յես կը խոսեմ։

Պառավը հառաչեց և, ձեռնափայտին հեն-  
վելով՝ յելավ տեղից։

— Ասա՞ հարսներն իրանց ուտըմ են։

— Լավ, լավ... դու գնա հարսների մոտ։

Ու տիկին Վերգինը մորը ճանապարհ քցեց  
մինչև փողոց իջնող աստիճանների գլուխը, շա-  
լը ուղղեց, նայեց՝ մինչև իջավ փողոց, ապա  
յետ յեկավ և, մենակ մնալով, շարունակեց մտա-  
ծել յեղբայրների մասին.—ինչ պիտի արած-  
լինեն արդյոք, վոր ձերբակալել են։ Ճիշտ ե,  
առաջ գործում եյին, բալշեիկների դեմ եյին,  
հիմա ել չեն սիրում և, նույնիսկ, ատում են...  
Այո, յեղբայրների տրամադրությունը Վերգինը  
լավ գիտի, բայց թե ինչու համար են բոնել  
նրանց չի հասկանում։

ԶԵՆՔ ԵՆ ԱՊԱՀԵԼ, ԿԱՊԵՐ ԵՆ ՈՒՆԵցԵԼ յԵՐԿ-  
ՐԻԾ ՎԻԱԽԱՃ ԸՆԿԵՐՆԵՐԻ հԵՏ, ԹԵ ՀԱՍԱՐԱԿ ԹՅու-  
ՐԻՄԱԳՈՒԹՅՈՒՆ Ե:

Մտածում ե տիկին ՎԵՐԴԻՆԸ, մտածում ե  
և բան չի հասկանում: Այնուամենայնիվ, տ-  
սում ե նա ինքն իրեն, ինչ ել արած լինեն, Ոսեփը  
չի թողնի... Դպրոցի ընկեր են յեղել, բան... Յե-  
թե վոչինչ ել չլինի, Ոսեփը իրեն գոնե—ՎԵՐ-  
ԴԻՆԻՆ այնքան ե՝ սիրում վոր... Այո, յեթե յեղ-  
բայրները մի հանցանք ել գործած լինեն (նա  
չի կարծում, վոր գործած լինեն) Ոսեփը ուրիշ-  
ների պես չի վարվի... Ճիշտ ե՝ խիստ ե, իրա-  
ասածի, անզիջող, բայց և այնպես... ԶԵՐԲԱԿԱ-  
ԼՈՒԹՅՈՒՆԸ, յԵՐԵՒ, յԵՂԵԼ ե առանց Ոսեփի գի-  
տության. յԵԹԵ վոչ—նա գիշերը մի բան կա-  
սեր իրան:

Մտածեց տիկին ՎԵՐԴԻՆԸ, զանազան հա-  
վանական ու վոչ հավանական յԵՆԹԱՊՐՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐ արավ և նորից զգույշ քայլերով զնաց զԵՍԻ  
ՆՆԴԱՍԵՆՅԱԿԻ դուռը:

Մոտեցավ և նորից յԵտ կանգնեց:

Ուզեց մտնել, հարց ու փորձել մարդուն,  
բայց չուզեց դարձյալ քունը խանգարել.  
— Թող զարթնի՝ հետո...

## 2.

Այս ժամանակ, յերբ տիկին Վերդինն ամեն կերպ աշխատում եր մարդու քունը չխանգարել, մարդը վաղուց զարթնել եր արդեն։ Ննջասենյակը, ուր դրված եր յերկու յերկաթե մահճակալ, մի փոքրիկ սեղան, և վորի դույդ լուսամուտներն ել ծածկված եյին հասարակ, թափանցիկ վարագույրներով,—պառկած եր Հովսեփը կամ ինչպես բոլորն եյին կանչում հիմա—ընկեր Ռոեփը։ Զեռը, ավելի շուտ նիհար, մազոտ բազուկը վերմակի տակից հանած՝ տրորում եր քնատ աչքերը։ Լսելով հարեան սենյակի բարձր խոսակցությունը, վոր անսովոր եր այդ ժամին նրա ականջին, նա արթնացավ և... ճանաչեց զոքանչի դարդ ձայնը, և ամեն ինչ լսեց։ Աներոջ վորդիների ձերբակալությունը հայտնի եր նրան։ Դեռ գիշերը գիտեր, նույնիսկ դեռ յերեկ առավոտ գիտեր, վոր այդպես պիտի լինի և, սակայն, կնոջ վոչինչ չեր ասել... Ի՞նչ կարիք կար... Նա, առհասարակ, սովորություն չուներ, կնոջը վորեե բան հայտնելու, ինչ վերաբերում եր կուսակցական ներքին դորձերին, և կինն ել, իր հերթին, չեր հետաքրքրվում նրանից գաղտնիքներ դուրս քաշելու։ Տիկին Վերդինը հեղանիքներ դուրս քաշելու։

փոխությամբ, կուսակցական գործերով հետաքրքրվում եր այնքան, վորքան դա կապ ուներ իր ամուսնու կյանքի ապահովության հետ։— Այս դեպքը, վոր կատարվում ե—Ռուֆի համար ինչպես կը լինի. Նրան մի բան չի պատահի արդյոք. Դրանից Ռուֆը չի վտանգվի... Իսկ վերգինի այս հետաքրքրությունն ու վախը առաջանում ելին նրանից, վորովհետեւ նրա աչքը վախեցել եր, վորովհետեւ Ռուֆը շատ անգամ եր յենթարկվել վտանգների։ Այն ել ինչպիսի... Պսակվելու որից, պատերազմից առաջ, պատերազմի որերին քանի անգամ եր խուզարկվել, բանտ նստել, իսկ 20 թվին վրաց մենշևիկները քիչ մուաց գնդակահարեն. հազիվ փախավ Հյուսիսային կովկաս։ Հետո մայիսյան ապստամբության որերին՝ Ալեքսանդրապոլում նրան, անշուշտ, ելի գնդակահարեցին պիտի, յեթե ժամանակին չանցներ կոռի... Եհ, վոր մնկն ասես. տիկին Վերգինը շատ բան եր տեսել, և այդ պատճառով միշտ վախենում եր ամուսնու կյանքի համար և նրա գործերով հետաքրքրվում եր այնքան, վորքան բանը վերաբերում եր նրա կյանքի ապահովության։ «Յեթե եղաքես ե, յեթե եղքան վախենում ես,—ասում ելին ընկերուհիներն ու հարևանուհիներն,—մարդուդ յետ պահիր եղ գործերից, ել վտանգ չի լինի»... Յետ պահել...

Այդ մասին խոսելն անգամ ավելորդ է։ Ավելորդ, վորովհետև նախ՝ Ուսեփը նրան չեր լսի, յերկրորդ՝ ինքը հավատում եր Ուսեփին, հավատում եր, թե ինչ անում ե նա—լավ ե անում, մաքուր սրտով ե անում, արդար գործի համար ե անում... Յեվ Ուսեփին ել, պետք ե ասած, գոհ եր, վոր կինս ուրիշ կանանց նման չի հետաքրքրվում իր կուսակցական ներքին գործերով, չի ձանձրացնում զանազան հարցերով ու միջամտություններով։

«Բայց այսոր ուզի՞-չուզի պիտի հետաքրքրվի, պիտի հարցեր տա, անցնում ե Ուսեփի գլխով, և նա, աչքերը տրորելով՝ մտածում ե, վոր այսորվանից իր ու կնոջ միջև մի բան պիտի սկսվի, ու չի կարող չսկսվել. մի սառնություն, մի կեղծ, անհարմար վիճակ, գուցե՛ ավելին։ Յեղբայրներն են, վերջապես. չի կարող այլևս վերգինը սառնասիրտ լինել, առաջվա պես անտարբեր... Նա մորը խոստացավ իմանալ... ի՞նչ պիտի ասել հիմա... Ուսեփը շուռ յեկավ և յերեսը դարձեց գեպի պատը. գորգի վագրը իր գեղին աչքերը հառեց նրա յերեսին. Ուսեփը կոպերը փակեց. լսելի եր քամու ձայնը, վոր մսզում եր դուրսը, և վերգինի քայլվածքը հարեան սենյակում. Նա մանր քայլերով գնում ե գալիս. հավանորեն սենյակը կարգի ե բերում—ինչ-վոր

թափ ե տալիս, ինչ-վոր ծփծփում ե և պոլովում զգույշ քայլերով, այնպես զգույշ, վոր Ոսեփի քունը շխանգարի։ Մի քանի անգամ համոտեցավ դռներին և նորից հետ զնաց։ «Անհանգիստ ե, բայց չի ուզում քունս խանգարել», մտածում ե Ոսեփը և աչքերը փակում նորից։

Մի քանի րոպե անց, սակայն, դուռը բացվեց և Վերգինը նայեց ներս։

«Քնած ե», շշնջաց ինքնին և վարանոտ կանգնեց դռների մեջ։

— Արթուն եմ. ինչ կա,—հարցրեց Ոսեփը առանց յերեսը դարձնելու։ Գիտեր ինչ ե ասելու կինը և այս՝ ինչ-վոր ասելու եր—վաղ ուշ պիտի ասեր, ու վորքան շուտ—այնքան լավ. թող ասի։

Վերգինը հանգարտ քայլերով առաջ յեկավ և կանգնեց ամուսնու մահճակալի մոտ։

Լոռվթյուն։

— Սուրենին և Ռուբենին ինչու համար են բռնել, սկսեց Վերգինը դողացող ձայնով։

— Յեղբայրների՞դ...

— Այու, Քեզ հայտնի յե այդ բանը։

— Այու, —պատասխանեց Ոսեփը դարձյալ յերեսը դեպի պատը, դեպի վագրը. —Հայտնի ե...

— Բայց ինչու համար...

— Ինչու. յերեսի մի բան կա, ասավ Ոսեփը

Համարյա անտարբեր, ելի յերեսը դեպի պատը:  
Մի բան... Այս խոսքերը Վերգինին թվա-  
ցին խորհրդավոր:

— Մի բան... Ի՞նչ բան կարող ե լինել...  
(լոռվթյուն): Յես չեմ կարծում, թե նրանք վորեե  
այնպես բան արած լինեն... (լոռվթյուն): Ճիշտ  
է, նրանք ձեզ չեն սիրում և նույնիսկ ատում  
են, այդ դու ինձանից լավ գիտես, բայց հազիվ  
թե այնպիսի բան անելին վոր...

Ոսեփը լոռւմ ե... Այդ լոռվթյունը այնքան  
ծանր թվաց Վերգինին, վոր նա ողի պակասու-  
թյուն զգաց կարծես և խոր շունչ քաշեց:

— Իսկապես, կամ մի վորեե բան:

— Կըքննենք՝ կիմանանք:

— Ուրեմն կասկածով են ձերբակալված:

Ոսեփը դանդաղում ե պատասխանել:

— Համարյա թե... մասամբ...

Վերգինը թեքվում ե և տարակուսած նայում  
Ոսեփին:

— Յես քեզ չեմ հասկանում, Ոսեփ. դու  
պարզ չես խոսում: Ինչպես յերեսում ե—մի բան  
կա, թագցնում ես: Հը... Ինչու յերեսդ այս  
կողմը չես դարձնում:

Ոսեփը յերեսը շրջում ե:

— Թագցնելու վոչինչ չկա: Ասացի՝ քննու-  
թյունը կըպարզի:

— Բայց ի՞նչ կասկած ե. չի կարելի իմաստալ... (լոռություն)... Յես կարծում եմ՝ նրանք անմեղ են և հազիվ թե...

— Կարող ես յերդվել, վոր անմեղ են, — հարցըց Ոսեփը տեղից յելնելով, և իսկույն փոշմանեց, վոր այս հարցը տվեց (ի՞նչ կարիք կար): Վերգինը շփոթվեց. — Յես... Յերդվեմ... Բայց ով ե իմանում... Յես, համենայն դեպս, կարծում եմ, վոր նրանք այնպիսի բան չեյին անի վոր... Իսկ դու, միթե դու հավատում ես, վոր նրանք վորեւ վատ բան արած լինեն...

— Քննությունը կըպարզի, — ասավ Ոսեփն այս անգամ շատ մեղմ՝ կնոջը չհուզելու համար: Ու սկսեց հազնվել:

Բայց Վերգինն այդ մեղմ պատասխանից չհանգստացավ:

— Այնուամենայնիվ, յես ելի չհասկացա ի՞նչու համար են ձերբակալել, ի՞նչ բանի մեջ են կասկածում: Հը... Դա կուսակցական գաղտնիք է, Այս...

— Առայժմ այս:

Լոեցին: Ոսեփը շարունակեց հազնվել, իսկ Վերգինը մի վայրկյան նայեց մարդուն, հետո լուսամուտների վարագույրները յետ քաշեց ու ապա իր մահճակալի յեզրին նստելով՝ ձեռները դոկը դրած՝ կըկին սկսեց նայել մարդուն: Նա-

յում եր լայնացած աչքերի անծանոթ հայացքով, այնպես, կարծես առաջին անգամն եր տեսնում նրան։ Նայում եր շնչազուսպ և նրա լիքը կուրծքը իջնում եր, բարձրանում։ ու դեմքը կարմրել ե պուտի պես։ Իսկ Ոսեփը շարունակում ե հաղնվել՝ գլուխը կախ, կենորոնացած։

— Լոիր, Ոսեփ, —խոսում ե հանկարծ Վերգինը փոխված ձայնով, —մի բան հարցնեմ...

Ու ձայնը դողում ե բեկ-բեկ։

— Ասա տեսնեմ, խոսում ե Ոսեփին առանց գլուխը բարձրացնելու։

Վերգինը տատանվում ե, ձեռքով տրորում ե աջ ծունկը։

— Դու յերբեկիցե, քո կյանքում, առակամ հիմա, Հյուսիսային կովկասում կամ մի ուրիշ տեղ... Այսինքն քո պաշտօնի բերումով կամ (նրա ձայնը դողում ե կրկին) ... Այսինքն՝ մարդ սպանած կամ...»

Ոսեփը գլուխը բարձրացնում ե։

— Դա ի՞նչ հանկարծակի հետաքրքրություն ե։

Հետաքրքիր ե։

— Յենթադրենք թե՛ այս։ Հետո՞։

— Յես խնդրում եմ ուղիղն ասես։

— Ուղիղը, խոսքը յերկարում ե Ոսեփը և թեթևակի նայում կնոջ շառագունած դեմքին։

Նրա կուրծքը դարձյալ իջնում է, բարձրանում,  
— դու մինչև հիմա պետք է խմանայիր, վոր հեղա-  
փոխականը պարտավոր է անել ամեն ինչ...

— Յեվ նույնիսկ՝ մարդ սպանել...

— Այո, և նույնիսկ մարդ... Յեթե անհրա-  
ժեշտ է:

Վերգինը նայեց մարդու տչքերին, և նրանց  
անշարժ բիբերից համկացավ, վոր նա հանաք չի  
անում, ինչպես սովոր է յերբեմն, այլ խոսում  
եր լուրջ. մանավանդ նրա ձայնը, Վերգինին  
թվում եր, հնչում է պողպատի պես. Նա յերբեք  
մարդուն նման հարցեր չեր տված և յերբեք ա-  
ռիթ չեր ունեցած, ավելի շուտ չեր ուզած,  
նման խնդիրների մասին նրա հետ խոսել:  
Յեղել եյին սպանություններ, պատիժներ, վո-  
րոնց մասին նա չեր ել հետաքրքրվել, այսինքն  
ավելորդ եր համարել հետաքրքրվել, դանելով,  
վոր դրանք իր գործը չեն և այդպիսի սպանու-  
թյուններն ու պատիժները հեղափոխության ժա-  
մանակ անխռուսափելի յեն: Դեռ Հովհաննյան  
դպրոցում այդպես եր ասել ընդհանուր պատ-  
մության ուսուցիչը՝ ֆրանսական մեծ հեղափո-  
խության պատմությունն անելիս, և ինքն ել  
միշտ այդպես եր կարծում: Բայց այժմ նրա  
տչքերը բացվել եյին կարծես, ու մի ինչպոր  
մութ, զարհուրելի բան պարզվել եր նրա առաջ:

— Քանիսներն են իր յեղբայրների նման բոնը-վում, դատապարտվում ու սպանվում. քանի կին ե զրկվում ամուսնուց, քանի մայր վորդուց, քանի քույր յեղբորից, քանի յերեխա հոռից... Յեվ այդ բոլորը հանուն ինչի... Մարդկանց բարեկեցության... Տարորինակ ե. մարդկանց բարեկեցության համար մարդկանց զրկել կյանքից։ Նա այդ բանը չի հասկանում։ Առաջ, կարծես թե, հասկանում եք, բայց այժմ—վոչ։  
— Յեվ այդ սպանությունները մարդկանց բարեկեցության համար ե, — հանկարծ դիմում ե նա մարդուն։

Վ — Այս. յերբ մի քանիսը խանգարում են ընդհանուրի բարեկեցությունը... Քու կարծիքով ընդհանուրը զոհվի՞ լավ ե, թե մի քանիսը...  
Վերգինը դժվարանում ե առարկել. լուսմ ե մի վայրկյան, ապա զլուխը թափ ե տալիս և վոտքի յելնում։

— Այդպես ե, բայց... համենայն դեպս՝ սպանել... Յես կարծում եմ... Մարդը մարդուն... չեմ հասկանում... Յեթե իմանայի, վորդու—ուղղակի կամ անուղղակի սպանություն ես կատարել, յես, յես, չգիտեմ, ինչ կանեյի...  
Լուսթյուն մի վայրկյան։

Ոսեփը նայում ե կնոջ շառագունած դեմքին.

— Ի՞նչ կանեցիր...

— Ի՞նչ... Վերգինը դժվարանում է պատասխանել: Ի հարկե, յեթե պարզվեր, վոր Ռուեփը ուղղակի կամ անուղղակի մարդ է սպանել, ինքն ինչպես կարող եր նրա հետ... Բայց նա չի հավատում, վոր Ռուեփն այդպիսի բան արած լինի: Ամենեին: Յեվ կարիք ել չկա այդ մասին խոսելու:

— Բայց դու, ի հարկե,—ժպտում է Վերգինը և ձեռը դնում մարդու ուսին.—Դու այդպիսի բան վոչ արել ես, վոչ ել... Յես հարցավի միայն այնպես...

Յեվ ժպտում ելի:

Ռուեփը լուռ է:

— Հիմի, ինչ վերաբերում է Սուրենին ու Ռուբենին,—շարունակում է Վերգինը.— յես ուզում եմ իմանալ նրանց մեղքն ի՞նչ ե:

— Ասի՛ քննությունը կըպարզի,—պատասխանեց Ռուեփը չոր և, կաշվե բաճկոնը հաղնելով առանց թեյի, առանց լվացվելու, դուրս յեկավ տնից:

Հարցին պատասխան չստանալով՝ Վերգինը մնաց տարակուսանքների ու կասկածների մեջ.

— Ի՞նչ պիտի լինի:

## 3.

Ծանր, անհանգիստ որեր եյին, ու քանի որ  
եր քամիներ եյին փշում անընդհատ – գեշեր,  
ցերեկ, ու քամիների հետ ինչ-վոր խուլ լուրեր  
եյին պտտում փոքրիկ քաղաքում։ Անհանգիստ  
եյին քաղաքացիները, անհանգիստ եյին բար-  
շեիկները. — Ի՞նչ ե լինելու... Արգելվեց անց ու  
դարձը յերեկոյան 8-ից հետո։ Դիշերները, քա-  
միների հետ, սրբնթաց ավտոմոբիլներ եյին անց-  
նում փողոցներով — վը՝ զզ... «Փախչնում են», ա-  
սում եյին քաղաքացիները տներում փակված,  
ու չեյին համարձակվում փողոց նայել. գիշեր  
եր, սութ, յերկյուղալի... Լույսը բացվելուն  
սկս, սակայն, վեր եյին թռչում անկողիններից  
ու գիշերային սպիտակեղենով վազում դեպի լու-  
սամուտները. — «Հետաքրքիր ե՝ գնացել են, թե  
չե»... Նայում եյին դաղսուկ, աչքները ծերպ  
անում, և միշտ ել տեսնում եյին միևնույնը —  
աստղանիշ սաղավարտով պահակ զինվորներ, վոր  
հոգնած, քնառ անցնում եյին փողոցով, կամ  
կարմիր գրոշակներ՝ հարևան տների ճակատին,  
վոր փողփողում, ֆրաքում եյին քամիների ա-  
ռաջ. — Զե, դեռ եստեղ են... Ու, կամաց կամաց,  
մեկը մյուսի յետեից, փողոց եյին դուրս գա-  
լիս մանրավաճառները, ուսուցիչները, արհես-

սավորները՝ զգուշությամբ իրենց չորս կողմը  
նայելով, դեմքներին չեղոքության արտահայ-  
տություն տված՝ դնում եյին բազար նոր  
լուր, նոր խաբար իմանալու։ Հավաքվում  
եյին պատի լրագիրների, հայտերի, պլակա-  
տների առջև և յերկյուղով, սրտդողով, մըրկի  
մեջ ընկած ճամփորդների նման՝ գլուխներն  
ոձիքների մեջ խրած՝ լուռ կարդում եյին լրա-  
գիրները, հայտերը և լուռ հեռանում. — Ո՞, ես  
բայլշիկները մի բան պարզ չեն գրում, վոր  
իմանաս ինչն ինչոց ե... Ու բազարում, փակ  
խանութների մոտ կանգնած՝ աշխատում եյին  
բայլշիկների շարժումից, քայլերից, դեմքից գու-  
շակել մի բան. Յեվ ահա յերբ բայլշիկի մեկը  
վազում եր, ձեռը մեջքի առօճանակին դրած—  
նրանք աշքով եյին անում իրար։

«Վազում ե...»։

«Հըմ...»։

«Երկում ե մի բան կա...»։

«Հըմ...»։

Ու կոկորդները մաքրելով, բավականու-  
թյամբ նայում եյին իշար։ Իսկ յերբ մի ուրի-  
շը, կամ մի քանի բայլշիկ միասին անցնում  
եյին հանդիստ կամ նույնիսկ ծիծաղելով, նրանք՝  
չեղոքության արտահայտությունը դեմքներին,  
նայում եյին նրանց և փսփսում. «Տակները

բոշ ա. ծիծաղով ծածկում ենց, ասում եր մեկը. «Մթամ տեսէք-տեսէք բան չկա», — ավելացնում եր մյուսը, և ելի, կոկորդները զգուշորեն մաքրելով՝ բավականությամբ նայում եյին իրար:

Այդ առավոտ ել, յերբ Ոսեփը՝ յերկարածիտ կոշիկներով, կեպին զլխին, ձեռները կաշվե բաճկոնի կրծքագրպանները դրած՝ անցավ բազարով—պատի լրագիրների առջև և փակ խանութների մոտ խմբված առետրականները նրա մտահոգ դեմքին նայելով՝ փսփսացին. «Բանները վատ ու երեսում—նոթերը կիտած ա...»:

Յեվ, իրոք, Ոսեփի դեմքը մոայլ եր սովորականից—հոնքերն ավելի եյին իջել աչքերի վրա: Մտահոգ եր: Տնից դուրս գալով՝ փոխանակ հեղկոմ գնալու, նա քայլերն ուղղեց դեպի խճուղին, վոր գնում, ձգվում եր քաղաքից դուրս—հեռն, հեռն—դեպի գյուղերը, - դեպի քաղաքները, դեպի Յերեան... Ծանոթները, մասսամբ անծանոթները, մոտից անցնելիս բարեկում եյին նրան—վոմանք հարգանքից, վոմանք նրա ուշագրությանը արժանանալու, - բայց նա Ոսեփը, վոչ-վոքի չեր պատասխանում, ավելի շուտ չեր նկատում. գնում եր ձեռները միշտ կաշվե բաճկոնի կրծքագրպաններում, մտամփոփու կենարոնացած: Մտածում եր կնոջ հետ ու-

նեցած խոսակցության վրա և այդ պատճառով  
 հեղիում գնալուց առաջ, ուզեց «անցնել մի քիչ»:  
 Նա ամեն ինչ չասավ կնոջը և ասել—չեր կտ-  
 րող. Նախ՝ միանգամից հայտնել նրան յեղբայր-  
 ների ձերբակալման խսկական պատճառը—ան-  
 կարելի յեր. Վերգինը պիտի հուզվեր, անհանգըս-  
 տանար և յերկրորդ՝ կարիք չկար... Այդպես եր-  
 Ռուեփն առհասարակ սովորություն չուներ ամեն-  
 քան, ամեն մի գաղտնիք հայտնել կնոջը վհչ  
 թե նրա համար, վոր չեր հավատում. ընդհակա-  
 ռակը. Նա Վերգինին հավատում եր անվերա-  
 պահ, բայց միանգամից այդպես եր—սովորություն-  
 ե... Քանի-քանի անգամ յեղել են վտանգավոր  
 դեպքեր, ասենք, վերահաս կատաստրոֆներ, և  
 դրանց մասին կնոջը չի ասել վոչինչ, վորովհե-  
 տե գիտեր, մտածում եր, վոր Վերգինն իր  
 պատճառով, իր անթիվ ձերբակալությունների-  
 որերին, շատ հուզումներ ե կրել և այժմ ել  
 ամեն մի չնչին դեպք հուզում ե նրան—թե  
 արդյոք մի բան չպատահի իրեն՝ Ռուեփին. Բայց  
 այս անգամ, ամեն ինչ կնոջը չասելու պատ-  
 ճառը այլ եր: Կատարվել եր մի բան, վոր հեղ-  
 իումի հինգ անգամից և մի քանի ապատասխա-  
 նատու ընկերներից» բացի՝ վոչ-վոք չպիտի ի-  
 մանար, այլապես հետեանքը վատ կըլիներ: Ան-  
 հրաժեշտ ե ծայրահեղ զգուշություն, զգուշու-

թյուն, զգուշություն... Բանն այն եր, վոր Յերեանն ընկել եր. ապստամբած դաշնակցականները գրավել եյին քաղաքը և այժմ՝ նրանց ու կոմունիստների միջև ֆաղաֆացիսկան կռիվ եր գնում, վորը, դժվար եր ասել, ինչով կըվերջանար.—Բավական եր հիմա այս լուրն իմացվեր։ Պիտի տարածվեր իսկույն, և փոքրիկ քաղաքում նույնպես կարող եր ապստամբություն բռնկվել. գուցե և չբռնկեր, բայց ով կարող եր յերաշխավորել... Յեվ ահա Յերեանի այդ ապստամբների հետ կապ ունեյին Վերգինի յեղբայրները։ Յերեկ յերեկո քաղաքի մի բոլորովին աննշան ճանապարհի վրա պահակություն անող ընկերները, բոլորովին պատահաբար, բռնել եյին մեկին՝ մի գյուղացու, ավելի շուտ մի ծպտյալ մարդու (նրա ինքնությունը տակավին չեր պարզված), վորի մոտ և գտել եյին մի նամակ՝ Վերգինի յեղբայրների անունով, թէ՝ «Յերեանը մեր ձեռքին ե» (գրում եյին ապստամբները), գուք ել վոտքի յելեք... Ահա պատճառը Ասլանյան յեղբայրների ձերբակալության։ Նամակը գրված եր այնպես, վոր յեթե մի յեղբոր ձեռք չհասնի, ընկնի գոնե մյուսի ձեռը.՝ Հիշված եր յերկուսի անունն ել. ակնարկներից յերեսում եր, վոր մի ուրիշ նամակ ևս ստացած պիտի լինեյին։ Կազմ ապստամբների հետ—պարզ եր

Հնարավոր եր այս բոլորը հայտնել վերգինին... Յերևանի անկախ մասին Ոսեփը և ընկերները գիտելին մի շաբաթ առաջ, բայց չելին կարծում, նրանց մտքով անդամ չեր անցնում, թե ապստամբները կազ ունեն իրենց քաղաքի հետ։ Այժմ պարզ եր, վոր այդ կապը վաղուց յեղել ե և հիմա գուցե ապստամբություն ե պատրաստվում քաղաքում։ Այդ բանը նկատի ունենալով հեղկումի անդամներից մեկը, սաստիկ գրգոված՝ պահանջում եր «իսկույն և յեթ գնդակահարել» Ասլանյան յեղբայրներին... Մի յերկուսը միայն խորհուրդ տվին՝ սպասել նոր լուրերի—Յերևանի մասին. գուցե ապստամբությունը ճնշվել ե արդեն, այն ժամանակ կրտեսնեն... Հիմա, յենթադրենք, Յերևանը նույն գրության մեջ է, ինչ պիտի անել, մտածում ե Ոսեփը ու գնում ձեռները կաշվե բաճկոնի կրծքազրպանները դրած։ — յենթադրենք գնդակահարեցինք, դրանից հետո ինչպես կրվերաբերվի կինը իրեն. կարող ե ինքը առաջվա պես գնալ կնոջ մոտ և խոսել նրանեւ... Հնարավոր բան ե—սպանել մեկի յեղբայրներին և ապրել նրա հետ—նստել միևնույն սեղանի շուրջը, պառկել միևնույն անկողնում... Սրիկաներ, դուք ինչու նրա յեղբայրներն եք... Մտածում, խոսում ե մտքում Ոսեփը և ձեռները կաշվե բաճկոնի տաք կրծքազրպանները

Մտածում, խոսում ե մտքում Ոսեփը և ձեռները կաշվե բաճկոնի տաք կրծքազրպանները

դրած՝ գնում եղեղի մեծ ճանապարհի ծառուղին։  
Գնում եղու մտածում ելի, թե ինչու իր ժա-  
մանակին շընդունեց Յեկայի առաջարկը և չգը-  
նաց Եջմիածին։ այստեղ, համենայն ղեպս, կնոջ  
բարեկամներ և առհասարակ, բարեկամներ չկա-  
յին։ Իսկ հիմա—դե արի... Յեվ բանն այն ե,  
սրիկաները կնոջ, յերեխաների տեր են։ Դա գո-  
նե չլիներ... Բայց Վերզինի համար յեղբայր-  
ները նշանակություն ունեն և վոչ թե նրանց  
յերեխաները կամ կանայք... Նամակը գոնե-  
մեկի անունով լիներ։ Բայց նա ուղղված ե  
յերկուսին ել և գրված ե «ստացանք»։ նշանա-  
կում ե՞ սրանք մի բան դրել են, նրանք ստա-  
ցել են և պատասխանել։

— Հիմա արի և խնայիր դրանց,—ասում  
եր Ռոեփը մտքում և ինքն իրեն հարցնում, թե  
մի այդպիսի արարքի համար նրանք կինայելին  
իրեն; և գտնում եր վոր—վոչ։ Ամենեին։ Այն  
որից, յերբ ինքը յեկել ե այստեղ—նրանք չեն  
ել ուզում իրեն տեսնել և տեսնելիս խուսափում  
են միշտ, իսկ դեմ առ դեմ հանդիպելիս—ուղ-  
ղակի չեն բարեւում։ Այո, նրանք ասում են ի-  
րեն, ասում են իրենց հոգու ամբողջ ուժով,  
և յեթե մի բան, յենթադրենք, մի թեթև հե-  
ղաշրջում լինի—նրանք ամենից առաջ իր՝ Ռոե-  
փի գլուխը կըկտրեն։ «Իսկառես կանեն», մտա-

ծեղ նա.—Գուցե և վոչ. գուցե բան չանեն,  
խնայելով իրենց քրոջը, բայց վոչ իրեն—Ռսե-  
փին. Այժմ ինքն ել, յեթե նրանց մասին մտա-  
ծում ե—դարձյալ նրանց քրոջ պատճառով ե և  
վոչ թե նրանց սիրուն. Այո, յեթե իր կողմից  
վորեե զիջում լինի—այդ զիջումը արվելու յե  
նրանց քրոջը. Բայց կարելի՞ յե արդյոք, կնոջ  
պատճառով, զիջել բացարձակ ավազակների (վոր  
ուզում են խորտակել հեղափոխության գործը),  
թեկուզ դրանք լինեն կնոջ յեղբայրներ. Կարելի՞  
յե... Յեթե ընկերներից մեկը այնպիսի բան  
աներ—կնոջ հանցավոր յեղբայրներին փրկեր  
կամ նրանց հանցանքը (վորի վարձատրությունը  
պիտի լիներ գնդակահարություն) մեղմեր—ինքը  
և մյուս ընկերները ի՞նչպես կըվերաբերվեյին...—  
Յերկու կարծիք լինել չի կարող—այդպիսի մեկը  
կարժանանար բոլոր ընկերների դատապարտու-  
թյան և գնդակահանության գուցե.

Բայց յեթե այդ ընկերը սիրում ե կնոջը և  
այդ բանը անում ե նրա սիրուն... Այդ մի  
կողմ.—կարելի՞ յե արդյոք սիրած կնոջ յեղբայր-  
ներին սպանել և գնալ այդ կնոջ յերեսին նա-  
յել, ժպտալ, նրա հետ հացի նստել և, վերջա-  
պես, ապրել նրա հետ մի հարկի տակ. կարելի՞  
յե... Մի պատասխան կա—կարելի յե, յեթե

վորոշես զրկվել կնոջից։ Իսկ յեթե չես ուզում զրկվել, յեթե սիրում ես...

Մտածում եր Ռոեփը և գնում ձեռները կաշվե բաճկոնի կրծքագրպանները դրած։ Վերջին հարցի վրա նա ակամա կանգ առավ, ինչպես հանկարծ բացվող վիճի առաջ, կանգ առավ և շուրջը նայեց։ Ու այդ ժամանակ միայն նկատեց, վոր քաղաքից դուրս ե յեկել։ Անցել ե ուրեմն յերկու վերստ ճանապարհ, Պետք ե յետ դառնալ։

Յետ դարձավ նույն անշտապ քայլերով, դարձյալ մտածելով կնոջ և յեղբայրների մասին և այն մասին, թե ինչպես ընկերները կատաղած են այդ յեղբայրների դեմ։ Սերգեյը հենց գիշերը կամեցել է խփել նրանց, Սաքոն, թեև իր մոտ չի արտահայտվում, բայց սարսափելի գրգռված ե յերեսում։ Նա իր բարկությունը պարզ չի հայտնում իր մոտ, նկատի ունենալով իր և նրանց բարեկամությունը, բայց նա, ասում են, ապահել ե յերկուսին ել... «Սրիկաներ», ասում եր Ռոեփը մաքում աներոջ վորդիների հասցեյին—Դուքինչունք յեղբայրը յեղաք, լրբեր...

Լավ, այդ բոլորը այդպես։ Իիմի ի՞նչ կարելի յե անել։ Շատ-շատ ինքը, յեթե չի ուզում ձեռները թաթախել նրանց արյան մեջ, ընկերներին կըհայտնի, վոր շատ հասկանալի պատճառ-

ներով, հրաժարվում ե Ասլանյան յեղբայրների  
գատավճիռը վորոշող նիստին մասնակցելուց.  
թող թեկուզ—զնդակահարեն... Բայց այդ բանը  
կըքավարարի Վերգինին. Նա պիտի մեղադրի ի-  
րեն, թե ինչու իր ազդեցությունը գործ չի  
դնում կամ գործ չդրեց—իսկ իր ձախը միշտ  
կըլսեն—գուցե կարող ե փրկել իր ձեռնպահու-  
թյունը, միևնույն ե, նրան չի համոզի. Վերգինը  
պիտի կըկնի, թե ինչու չարավ հնարավորը և,  
ընդհակառակը, դիտմամբ ձեռնպահ մնալով, յեղ-  
բայրներին հանձնեց «անգութ» մարդկանց ձե-  
ռը... Իսկ յեթե իր ազդեցությունը գործ դնի,  
գուցե կարող ե մի բան անել... Վոչ, ավելի լավ  
ե ձեռնպահ մնալ... Բայց կարելի՞ յե արդյոք  
ձեռնպահ մնալ... Դա հավասար չե՞ արդյոք դա-  
վաճանության... Այ, յեթե Վերգինն ինքը լիներ  
հեղափոխական — կըհասկանար իմ դրությու-  
նը... Յեկ իսկապես—յեթե նա լիներ կու-  
սակցական—միթե, վորպես քույր, այլ կերպ կը  
մտածեր... Մտածում եր Ոսեփը, և ինչի մասին  
ել մտածում եր, մտքերը դառնում եյին կրկին  
աներոջ տղաներին: «Սրիկաներ, գոնե ձեր կա-  
նանց, յերեխաներին, մորը և քրոջը խնայեյիք»...

Մտածելով, անշտապ վերադառնում եր Ո-  
սեփը, հանկարծ հեղկումի պահակ միլիցիոներից  
մեկը կանգնեց նրա առաջ.—

— Հընգեր նախագայ...

Ոսեփը նայեց նրան վոտից-զլուխ, ունբան թվաց, վոր դա բոլոր ժամանակ իր հետ ե յեղել։ Իսկ միլիցիոները ձեռը տարավ դեպի գլուխը, իբրև թե պատիվ տալու և, իբրև նախկին զինվոր, հին սովորության համաձայն, հաստ կոշիկներով վոտները խփեց իրար։

— Հընգեր նախագայ, յեղկոմումը քեզ սպասում են...

Ասավ հեացող բամբ ձայնով և վոտներն ելի խփեց իրար։

— Հեռագիր ա յեկել ասում են՝ վոազ ա...

Գնացի տուն—տանը չեյիր...

Ոսեփը նայեց ժամացույցին.—ժամի 9-ն եր։ Յերկու ժամ ե կուրսն ե։ Մինչդեռ ընկերների հետ պայմանավորվել եյին 8-ին հավաքվել մի շարք շտապ գործեր քննելու, դրանց թվում և Ասլանյան յեղբայրների գործը։

— Հընգեր նախագայ, յես գնում եմ...

— Գնա՛...

Միլիցիոները, հին սովորության համաձայն, վոտները նորից խփեց իրար, շուռ յեկավ և մեկն տեղից պոկվեց ու վազեվազ առաջ անցավ, վոտներով փողոցի ձյունն ու ցեխը շաղ տալով, վորոնց կտորները թոշում եյին նրա դլից բարձր և ընկնում թիկունքին, մեջքին ու գլխին։

## 4.

Հեղկոմը զանվում եր քաղաքի կենտրոնում,  
գլխավոր փողոցի վրա, վաճառական Աթանի  
տանը, վոր զեղեցկությունից ավելի նշանավոր  
եր իր անցյալով։ Այդտեղ իր ժամանակին, ի-  
բենց ճամբորդության միջոցին, իջևանել եյին  
շատ նշանավոր անձեր—մի քանի նահանգապետ,  
գավառապետներ, թեմական առաջնորդներ և  
նույնիսկ ինքը կաթողիկոսը՝ Խրիմյան Հայրիկը,  
յերբ Պետերբուրգ եր գնում։ Այն հանգամանքը,  
վոր այդտեղ իջևանել եյին «այդքան պատվարժան  
մարդիկ», ինչպես տանտերն եր անվանում նը-  
րանց, դրա համար քաղաքացիներն այդ տան  
մոտով անցնում եյին պատկառանքով ու խորին  
ակնածությամբ, ինչպես սպասավորը մեծավորի  
սենյակի առջեից, իսկ ինքը՝ վաճառական Աթա-  
նը ամեն տարի, գարունը բացվելուն պես,  
ճերմակցնում եր տան պատերը դրսից և ա-  
ռիթը յեկած ժամանակ, յերբ, ասենք, դպրոցի  
կամ աղբյուրի համար փող եյին խնդրում նրա-  
նից, նա միշտ պատասխանում եր միևնույնը.  
«Յես իմ տնով եմ ծառայում ազգին, ուրիշներն  
ել թող ծառայեն փողով»։ Յեվ նա այնքան  
մեծ համարում ուներ իր տան մասին, վոր յեր-

ՔԵՔ ՀԵՐ Կարող յերեակայել, թե այն մի որ  
 կանցիլար կդառնա, ինչպես ինքն եր ասում խո-  
 րին սրտմտությամբ, և կաթողիկոսի, նահանգա-  
 պետի և գավառապետների փոխարեն կիջևանեն  
 ու կապըն այնտեղ «ինչ-վոր լոթի-փոթի» տր-  
 ղերք։ Առաջ, վոր այդ տանը՝ նրա սենյակներում  
 ու միջանցքներում հանդիսավոր լություն եր  
 տիրում, վոր ճանձի բզզոցն անդամ լսելի յեր  
 լինում, այժմ, սակայն, այնտեղ՝ առավոտից  
 մինչև յերեկո, անընդհատ յել ու մուտ եյին  
 անում ամեն կարգի մարդիկ, խմբվում եյին  
 մուտքի դրանը, միջանցքներում, իսկ սենյակնե-  
 րում հո՛ բազմաթիվ տղաներ ու աղջիկներ, գը-  
 րասեղանների մոտ նստած՝ գրում եյին, գրում,  
 գրում... Գրում եյին հրամաններ, կարգադրու-  
 թյուններ, ծանուցումներ, ու բոլոր սենյակնե-  
 րում ել՝ կարի լարված մեքենաների պես կամ  
 ուազմաղաշում գործող գնդացիքների նման  
 աշխատում եյին Ռեմինգտոններն ու Ռւնդերվուդ-  
 ները—Զըկ, Հըկ, Հըկ... Տա-տա-տա... Հիկ-  
 տա-Հիկ-տա-Հիկ-տա... Աշխատում եյին անվերջ,  
 անընդհատ, հետապա։ Գրում եյին հրամաններ,  
 կարգադրություններ, գաղտնի գրություններ...  
 Առաջները Աթակի տան ճակատին արտաքո-  
 կարգի տոն որերին եր միայն, վոր պարզվում  
 եր յեռագույն գրոշը, այժմ, յերբորդ ամիսն եր

ահա, նրա տան գլխին, և վոչ թե ճակատին,  
տնկել եյին հսկայական մի կարմիր դրոշ, իսկ  
դրան ճակատին արդեն, ամեն որ, մեկի տեղ,  
փողփողում եյին յերկուսը։ Դրանից բացի տան  
պատերին, վոր այնպես խնամքով ճերմակել եր  
տալիս Աթակը ամեն գարնան,—փակցնում ե-  
յին որը մի կամ մի քանի պլակատ. —Հաղթ-  
անդամ գյուղացին ցախավելով քշում եր կալվա-  
ծատերերին ու տերտերներին. —Մերկաբա-  
զուկ բանվորը մուրճով ջարդում եր յերկրագըն-  
դի յերկաթե կապանքները. —բանվորը և գյու-  
ղացին մուրճով ու մանգաղով յեղբայրանում  
են։ Այսպիսի պլակատներ կան և մյուս սենյակ-  
ներում, ուր Ռեմինգտոններն ու Ռոնդերվուդնե-  
րը գործում են գնդացիրների նման։

Հեղկոմի նախագահի սենյակը պաստառած  
է. պատերին Մարքս, Ենգելս, Լենին, Տրոցկի  
և սաղավարտով կարմիր-բանակային, վոր սվե-  
նը մեկնել է Լենաստանի կրծքին։ Պատերին՝

«Մահ բուրժուազիային»,

«Կորչի՛ կապիտալիզմը»

«Կեցցե աւխաւանիր»

«Կազմակերպենք շաբարույակներ»։

Հետո նախագահի գլխավերն՝

«Կարհ, զործող վերջացրիր զնա՛...»

Այդ որը, յերբ Ռոեփը շրջում եր փողոցում

— Նրա յերեք ընկերը — Հեղիոմի յերեք անդամը  
Նրա սենյակում սպասում են նրան։ Յերկուսը  
նստած են, մեկը՝ յերթեեկում և նյորդային  
քալեցով։ Նստածները զինվորական շինելներով  
են, յերթեեկողը՝ կաշվե բաճկոնով և կաշվե  
գլխարկով։ Նման ե շոգեշարժի մեքենավարի.  
Պնում ե գալիս և խոսում նյարդային, գրգռված  
շարժումներով, իսկ մյուսները՝ առաջներն ընկած  
նոր ստացված հեռագրին նայելով՝ լսում են նը-  
րան։

— Դե սրանից հետո, յեկեք պահադա  
նեցեք, — խոսում ե կաշվե բաճկոնավորը կարծես  
ինքն իր հետ, առանց վորեե կողմ նայելու,  
բայց բարձր, հուզված, յերբեմն մոնչյունով, հա-  
ճախ ոռւսերեն խառնելով։ — Վոչ, դրանց պետք ե  
բեզպահադնին... Թույլության ռեզուլտատը այ  
— դա յե... Յեթե Յերկանում բեզ պահադնի  
ըլեյին — ըստր եղ վազտանիեն չեր ըլի... Հա-  
կանում եք. Մենք շատ ցերեմոնիտայա ենք ըլում  
դրանց հետ... Հասկանում եք։

Շինելավորները լսում են նրան և, հեռա-  
գրին նայելով՝ մտածում, վոր Սերգեյը ճիշտ ե  
ասում։ — Թույլությունը, ի հարկե, վտանգավոր ե  
հեղափոխության ժամանակ։ Պետք ե կտրուկ լի-  
նել, անխնա, մտածում են նրանք։ Նրանք հա-  
գանում են Սերգեյին, նրա թափը հեղափոխա-

կան, վճռականությունը և համարձակությունը  
 դուր ե գալիս նրանց, միշտ հաճույքով են լսում  
 նրա ոռւսերենախառը, մասամբ բարբառով  
 զրույցը, բայց... Իրենք տեղացի յեն, նախկին  
 զինվորներ, յեղել են շատ ֆրոնտներում—Պե-  
 րեմիշ, Կարպատներում, Երզրում—Նահանջել  
 են բանակի հետ Սարիղամիշից, չեն յեղել, սա-  
 կայն, հեղափոխության յեռուն շրջաններում,  
 քաղաքացիական կոխման մեջ, այդ պատճառով  
 Սերգեյը, վոր մասնակցել ե Ռուսաստանի քա-  
 ղաքացիական կոխման, տեսել, լսել ե իրան-  
 կենինին ու Տրոցկուն—դուր ե գալիս նրանց,  
 լոռում են նրա հեղինակության առջև, բայց միշտ  
 գտնում են, վոր Սերգեյը տաք բնավորություն-  
 ունի և, առհասարակ, խիստ է. Յեվ դրա հա-  
 մար նրանք ավելի հարգում են նախազահ ըն-  
 կեր Ռուսին, վոր ավելի հասակով ե, ամեն բան-  
 հասկանում ե և քիչ խոսում ե, շատ զործում,  
 ու միշտ՝ մտածված, և տաք չե, ինչպես Սեր-  
 գեյը: Ընկեր Ռուսի... Ռուսի մասին մտածե-  
 լով՝ նրանց մտահոգում եր այն միտքը, թե նա-  
 խնչպես պիտի վերաբերվի իր անելոջ վորդիների-  
 գործին, վորը քննվելու յե այսոր.—Ի՞նչպես,  
 հետաքրքիր ե... Նրանք նույնպես վրդովված-  
 ելին Ասլանյան յեղբայրների դեմ, նույնպես  
 գրգռված ելին, մանավանդ նրանց նամակը

գտնվելու գիշերը, բայց խղճում եյին, վոր յերեխաների տեր են. զոնե ամուրի լինեյին—զըլուխը քարը... Բայց յերը մտածում եյին մի վայրկյան, վոր յեթե նրանց բանը հաջողեր, այսինքն՝ յեթե նրանց «ծերագիրը», ինչպես Սերգեյն եր ասում, իրագործվեր—իրենց բոլորին պիտի կոտորեյին—նրանք զայրույթից ատամները սեղմում եյին, գլուխներն որորում և մանչում քթածակերով... Մանկության ընկերներ լինելով՝ հիշում եյին այդ բողեյին նրանց վատ գծերը, չար արարքները միայն ու վրդովվում ավելի.— Նրանք հենց յերեխա ժամանակ եղալես եյին—միշտ թագուն գործող, գաղտնի բաներ կատարող, Այո, յեթե նրանց բանը հաջողեր, մտածում եյին նրանք,—իրենց բոլորին՝ պիտի կոտորեյին. Հեյին խնայի վոչ վոքի... Մտածում եյին զայրույթով, գրդոված, բայց նորից իրենց յերեխայելով նրանց տեղը, վոր կնոջ, յերեխաների ու մոր տեր են—խղճում եյին և ցավում նրանց հիմարության համար:

Իսկ նրանց առջև ընկած հեռագիրը հայտնում եր, վոր Յերեխանը տակավին գտնվում ե ապստամբած դաշնակցականների ձեռին.—սկետք եր զգույշ և ուշադիր լինել, տեղացիների նկատմամբ և պատրաստ ամեն անակնկալի։ Պետք եր զգաստություն, հեղափոխական տոկունություն,

աշալը ջություն. ամեն մի դավադիր փորձ պետք է խեղդել իր բնում... Ահա ինչ եյին ասում հեռագրի մի քանի խոսքերը... Յեվ այժմ նրանք սպասում եյին նախագահին, վորպեսղի վորոշեն իրենց անելիքը, և, դիխավորապես, քննեն ձեր-բակալված յեղբայրների խնդիրը։ Բայց նախա-գահը, հայտնի չե ինչու, ուշանում եր։ Զնայած յետեից միլիցիոներ եր զնացել, նա դարձյալ չկար։

— Ըսկեր Ոսեփին ուշացավ, խոսեց շինելա-վորներից մեկը,

— Նավերնո քշերվա բանը — օուրինների բոնվելը վատ ե ազդել վրեն, — ասաց Սերգեյը քմծիծաղով։ — իսկական օուրիններն են, չե՞ — հարցրեց նա լսածը ստուգելու համար։

— Այո, պատասխանեցին շինելավորները միասին ու մտախոհ։

— Այ, հենց ես բանը, — շարունակեց Սեր-գեյը։ — ինչու թողինք մինչև եսոր. ինչու հանց քշերը չվերջացրինք դրանց. պարզ ա վոր մար-դիկ կոնսր-ռեվոլյուցյոներ են. աշակար ա. ուզե-ցել են պերեվարու սարքեն և մոզ բոլորիս կտո-ը են. ըթենց չի, ախալեր. իսկ մենք հինչ ենք անըմ. վերջացնելու տեղակ՝ նստացրել ենք բան-տում, թե՛ սպասեցեք — կոնսր-ռեվոլյուցիան կը գա ձեզ կազատի։ Եսո վոզմուսիսելո՞ւ! Եսո պը-

ԵԽՍՄԱՓԻՆԵ պապուսիտելուսվո! նադո թըս  
քեզ պաշչադիմիւ...ու կտրուկ...իսկ դուք—ըս-  
պասենք, սպասենք...—հեգնեց Սերգեյը շաբու-  
նակելով գնալուզաւ, շուտ-շուտ մեջքին կապած  
ատրճանակը ուղղելով.—Սպասենք. հընչի սպա-  
սենք—կոնտր-ռեոլյուցիային...

Բարկությունից Սերգեյը կանգ առավ և  
նայեց ընկերներին, կարծես նրանցից սպասելով  
իր հարցին պատասխան։

— Ընկեր Սերգեյ, մենք ասինք՝ սպասենք՝  
գործը քննենք,—խոսեց շինելավորներից մեկը։

— Վոր որինավոր լինի, ավելացրեց մյուսը։  
Սերգեյը բռնկեց.—Որինավոր, որինավոր...

Ոսեփին ել հալբաթ եղացես ե մտածում—որինա-  
վոր... Նես! յես կարծում եմ—պետք ե վերջա-  
ցնել, քանի շուտ ե. և դա իր ազդեցությունը  
կունենա, հասկանում եք...»

Շինելավորները հասկանում եյին. ձերբա-  
կալված յեղբայրների արածը, ի հարկե, հակա-  
հեղուփոխականություն եր, գնդակահարության  
արժանի գործ, բայց յերբ դարձյալ մի ըոսկե-  
իրենց դնում եյին նրանց տեղը, խղճում եյին.—  
յերեխաների, մոր, կնոջ տեր... Անծանոթ լինե-  
յին—ուրիշ եր։

— Յես հասկանում եմ Ոսեփին, —շարունա-  
կեց Սերգեյը սենյակը չափելով.—նրա համար,

գուցե, ծանր ըլի ես բանին մասնակցելը. ազգական ե և այլն... Յօ իմ քառության մասնակցի մեր քննությանն ու վճռին։ Յես հասկանըմ եմ նրա պալաժենիեն և վարչե...

Շինելավորները լուռ եյին։ Գնդակահարել...

— Չորս վազմի, տիսր եղ լրերը ըեխեք ունեն, — սկսեց շենելավորներից մեկը, բայց նրա խոսքը կիսատ մնաց։

Ներս մտավ նախագահը — Ռուեֆը՝ ձեռները կաշվե բաճկոնի կրծքագրանները դրած։

— Ի՞նչ հեռագիր ե, ասաց նա արագ ընկերներին գլխով բարեելով։

Շինելավորներից մեկը հեռագիրը անխոս տվեց նրան։ Ռուեֆը աչքե անցրեց հեռագիրը, շրթունքները սեղմեց իրար, հետո ներքին շուրթը դրեց ատամների տակ։ Հեռագիրը նետեց մի կողմ և նստեց իր նախագահական տեղը։

— Յես այդպես ել կարծում եյի, — խոսեց նա զուսպ, չոր ձայնով, աշխատելով բանալ բաճկոնի ոձիքը, վորի կոճակը դժվարությամբ եր բացվում։ — Այո, յես այդպես ել կարծում եյի։

— Յեվ դրա համար, — կանգ առավ Սերգեյը մեկեն, հուզված, — յես կարծում եմ պետք աբեզպահաղինի ըլենք ԿՕ վсем կոնտր-քеволю-

ւեներամ. պետք ա ենպես դաս տանք, վոր եւ  
չհամարձակվեն...

**Ոսեփը նրա ակնարկը հասկացավ.**

— Ասլանյան յեղբայրների գործից ինչ պար-  
զվեց, — դարձավ նա Սերգեյին, և հիշեց կնոջը:

— Ինչ պարզվեց..., — Սերգեյը, նորից կանգ-  
տուավ և կողքից նայեց նախադահին: — Պարզվեց,  
վոր մեր բոլոր պրեդպալաժենինը ձիշտ են. նը-  
րանք դեյսվիտելնը կապ ունեն ապստամբների-  
նետ. յես պալագայս եմ անում, վոր դրանք  
եստեղ վագստանին են կազմակերպել արդեն...

**Ոսեփը լոռւմ եր նրան և մտածում, շըր-**  
**թունքները թեթևակի կոծելով. իսկ հեղկոմի-**  
**շինելավոր անդամները նայում եյին նրան և ըս-**  
**պասում, թե ինչ կասի Ոսեփը. բայց Ոսեփը**  
**լոռւմ եր.**

— Разумеется, — говаривая Степаняна, —  
нрանց գործը պիտի քննենք և արժանի վճիռ  
հանենք, բայց յես ուրիշ բան պըսի ասեմ...

**Ոսեփը, նրա հետ և հեղկոմի շինելավոր**  
**անդամները գլուխները բարձրացրին.**

— Յես առաջարկում եմ, վոր եղ գործը  
քննի եսոր, և առաջին հերթին, յեթե ձեզ հա-  
մար, ընկեր Ոսեփ, անհարմարութին կա...

**Ոսեփը հասկացավ ակնարկը, բայց հարցրեց.**

- 
- Ի՞նչ անհարմարություն...  
 — Վոր ձեր ժուրիներն են և վարչե...  
 — Այս, ընկեր Ռուփ,—խոսեց շինելավոր-  
 ներից մեկը, --յեթե...

Ռուփը բերանի անկյունով ժպտաց միայն:  
 Ընկերները նայեցին իրար և անհարմար զգացին  
 իրենց առաջարկի համար:

Մի ժամ հետո յեկավ քաղըաժնի նախա-  
 դահը--Մելիքը՝ իր սիրարական, ականջակալ ու-  
 նեցող զլխարկով, կաշվե բաճկոնով և յերկարա-  
 ճիտ, շշերի նմանող կոշիկներով. հետո յեկավ  
 Քաղըաժնի քննիչ ընկեր Արշակը՝ մի թղթապա-  
 նակ ձեռին, մշտական շարֆը վիզը փաթաթած.  
 յեկավ կոմիտեյի քարտուղար ընկեր Բենոն, և  
 սկսվեց Ասլանյան յեղբայրների գործի քննու-  
 թյունը:

---

## 5.

Վերգինի ձեռն ու վոտը բան չեր բոնում.  
 Նա շարունակ յել ու մուտ եր անում և անհամ-  
 բեր սպասում Ուեփին.---ճաշը, նրա գալու ժա-  
 մը, վաղուց անցել եր, բայց նա չկար.---ինչ ե-  
 պատահել, ինչու ուշանում ե այսպես, մտածում  
 եր Վերգինը և, մտածելով՝ գնում-գալիս շարու-  
 նակ, Քանի ժամ եր արդեն—մի տեղ նստել չեր  
 կարողանում. դուրս եր գալիս փողոց, գլուխը  
 հանում եր լուսամուտից և նայում Ուեփի ճամ-  
 փին. Նրան անհանգստացնում եր ավելի այն,  
 վոր մի լուր իմանա և հայտնի հորանց տուն—  
 մորը և հարսներին հանգստացնելու... Ինքը գը-  
 նալ չեր կարող, գոնե լուր ուղարկեր. իսկ ինքը  
 գնալ չեր կարող շատ հասկանալի պատճառնե-  
 րով. Նախ՝ ինչպես յեղբայրները խոռվ եյին  
 Ուեփից, այնպես ել խոռվ եյին իրենից վո՞չ մի-  
 այն յեղբայրները, այլև հարսները. յերկըորդ  
 յեթե այդ հանգամանքը թողներ մի կողմ և  
 գնար—պետք ե յենթարկվեր հարսների հարձակ-  
 ման՝ անեծքներին ու լուսանքներին, վորպես  
 յեղբայրներին ձերբակալող իշխանության գլխա-  
 վորի կին. և նա իր հարսներին լավ եր ճանա-  
 շում. զիտեր նաև ինչ լեզվի տեր են. բավական

Եր զլուխը տեսնեյին՝ հայհոյանքների ու անեծքների տարափ պիտի թափեյին... Յեվ, վերջապես, իր գնալը անհարմար եր՝ Ոսեփի դիրքի համար:

Այսպես եր մտածում Վերգինը և գնումգալիս սենյակում։ Իսկ դուրսը քամին՝ մոլեգնած անցնում եր փողոցներով և թրիսկոց ու շրիսկոց բարձրացնում այստեղ, այնտեղ։ Իսկ այս թրիսկոցն ու շրիսկոցն ավելի եյին անհանգստացնում Վերգինին. — Ի՞նչ յեղավ Ոսեփը, ինչո՞ւ յեռշանում. մերոնք հիմի իրենց կերան... Անհանգիստ, մտածելով՝ գնումգալիս եր Վերգինը, յերբ մայրը հովանոցի կոթը ձեռնափայտ շենած ու նրան հենած՝ ծեր մեջքից յերկուտակված, յեկավ նորից և, դեռ սանդուղների վրա, սկսեց իր դարդ, տղամարդու ձայնով.

— Ես ի՞նչ բան ա, աղջի. Են տղերանցը ճաշ են տարել—թողը՝ մ չեն իրանց տան... Բարսենց բան կը լի... Բա մի բան չիմացա՞ր. Ի՞նչ են արել ախր, հը... Յես Սիս շաշտրմիշ եմ ելել—հասկանը՝ մ չեմ ի՞նչ բան ա... Բոնել են՝ քիչ ա—թողը՝ ել չեն հաց ուտե՞ն...

Խոսում եր պառավը զլուխը կողմնացույցի պես տմբտմբացնելով ու, յերկար քայլելուց հոգնած, հեացող ու խզզացող ձայնով։ Խոսում

Եր և նրա ամեն մի խոսքը Վերգինին թվում եր  
հանդիմանություն, նախատինք:

«Ճաւը չեն ընդունել»... Դա ի՞նչ ե նշա-  
նակում, — մտածում եր Վերգինը հուզված. — ին-  
չու. այդպես վարվում են միայն նրանց հետ, վո-  
րոնց աքսորում են կամ... պիտի գնդակահարեն...

Ու իր հուզումը մորից ծածկելով՝ սկսեց  
հանգստացնել նրան:

— Ինչու մեկ ել յեկար. զուր ինչու եք ան-  
հանգստանում: Յես Ոսեփի հետ խոսեցի. հար-  
ցը, հարց ու փորձ արի—ասավ—«հանգիստ  
յեղեք (ավելացրեց իրենից), վոչինչ չկա. գործը  
կը քննենք»... Թեև խոսում եր Վերգինը մոր  
հետ ու քայլում անդադար, բայց նրա զլիսի մի  
անկյունում մի միտք եր գործում շարունակ:

Ճաւը չեն ընդունել...

— Յերբ գործը քննեն, բաց կը թողնեն,  
ի հարկե. — շարունակեց նա. — ի զուր չո չեն  
պահելու. իսկ յեթե ճաշը չեն ընդունել — դա  
վոչինչ. սոված չեն թողնի, իրանք ճաշ կըտան,  
ինչպես բոլորին...

Ճաւը չեն ընդունել...

— Հա՞ — բացականչեց պառավը թերահա-  
վատ հանգստությամբ, վոր տղերանցը սոված  
չեն թողնի և բոնողներն իրենք ճաշ կըտան. —  
Մուր ու թե. թող իրանք տան, միայն սոված

Հթողնեն, — շարունակեց նա գլուխը կողմնացույցի պես տմբտմբացնելով. — բա ասըմ են թե՝ բանները վատ ա, մթամ՝ մեղքները շատ ա—դրա համար ճաշը չեն վերցրել կամ, ով զիտի, ասըմ են՝ Ըրեան պտի տանեն—դրա համար։ Հազար ու մի բան են ասըմ—հասկանը՝մ չեն, աղջի…

Վերգինը կրկին սկսեց հանգստացնել մորը, վոր վոշինչ չկա, վոր նա զուր տեղը յեկել ե մեկ ել. և խորհուրդ տվեց գնալ տուն. ի՞քը ամեն բան կիմանա և լուր կըտա:

— Գնամ, ասավ պառավը տարակուսած. — բա են հարսներն ւնտեղ իրանց ուտում են, գնամ ինչ ասեմ…

— Ասա՞ հանգիստ մնան. գիշերը բռնել են եսոր հո բաց չեն թողնի. գործը կը քննեն—եսոր չե, եգուց, մյուս որը կը թողնեն, յերկար հո չեն պահելու…

Վերգինն ուզում եր ասել—քանի Ոսեփը կա—նրանց վնաս չի հասնի, բայց փոշմանեցւ Ավելի շուտ՝ կասկածով լոեց. արդյոք Ոսեփը կը պաշտպանի վոր…

— Ասըմ ես մի քանի որից բաց կը թողնեն… Դու ասես՝ աստված լսի, — հառաչեց պառավը. — Դու ասես՝ աստված լսի, թե չե՞ են պես բաներ են խոսում—սիրաս ջուր ե դառ-

նում... Ա'ի, քանի անգամ ըեխա վախտներն ասում եյի. «Ա'յ տղեք, բան չունեք. ձեռ վեր կալեք եղ կուսվացկութենիցը, դա խեր բան չի ելավ վոչ. իրանց եշը քշեցին... Դե հիմի յես ինչ անեմտ Գնամ, ասում ես ելի՞:

— Հա, դու հանգիստ գնա. հարսներին ել ասա հանգիստ մնան:

Մորը ճանապարհ դնելուց հետո՝ Վերգինը նորից սկսեց իր անցուղարձը սենյակում:  
Ճաշը չեն ընդունել...

Դա յերեի Ռսեփը չի իմանում... Ինչ ե նշանակում. ծանր հանցանքի տեր են. բայց ինչ հանցանքի. Ինչ պիտի արած լինեն, վոր հականեղափոխական գործի մեջ են մեղադրում... Մտածում եր Վերգինը քանի երրորդ անգամը և միշտ ել յեզրակացնում, վոր ինչ ել արած լինեն յեղբայրները, Ռսեփն, այնուամենայնիվ, այնքան ազդեցություն և հեղինակություն ունի, վոր նրա մի խոսքը բավական ե. Վոչ-վոք առանց նրան վոչինչ չի անում, և բոլորը միշտ նրա կարծիքն են հարցնում: Վորքան ել յեղբայրները ատում են Ռսեփին, բայց Ռսեփը նըրանց հետ չի վարվի այնպես, և չի թողնի վարվեն այնպես, ինչպես ուրիշների հետ: Վերգինը համոզված եր այդ բանում, բայց նրան զբաղեցրնում եր միայն այն միտքը, թե ինչ ե ար-

Դյոք յեղայրների հանցանքը և ինչու ճաշը չեն  
ընդունել...

Մտածում եր Վերգինը, պտտվում սենյա-  
կներում, աչքը միշտ ճամփի, թե յերբ պիտի  
Ոսեփը գա, վոր կարելի լինի մի բան իմանալ:

Ու նա սպասումի յերկար ժամեր ան-  
ցրեց մինչև, վերջապես, ամուսինն յեկավ։ Ուշ  
յերեկո յեր արդեն, քաղաքի կեսը համարյա քը-  
նած, յերբ Ոսեփը ներս մտավ—հոգնած, դադը-  
րած։ Նրա դեմքը մտահոգ եր ու մռայլ։ Դեռ  
աստիճանների վրա վոտնածայն լսելով՝ Վերգի-  
նը վազեց ընդառաջ։

— Հը՛, ի՞նչ յեղավ, ի՞նչ արիք,—հարցրեց  
անհամբեր, անհանգիստ աչքերը մարդու յերեսը  
քցած։

Ոսեփը լուռ եր. առանց կնոջը նայելու,  
նա դուռը դրեց, հետո կաշվե բաճկոնը հանեց  
անխոս.

— Հոգնած ես, հը՛,—շարունակեց Վերգի-  
նըն իր հարցերը։ —Ի՞նչու չես խոսում։ Ասա,  
ի՞նչ պարզվեց։ Քննեցի՞ք (նայում ե մարդու  
աչքերին)։

— Այս, —խոսեց Ոսեփը կես բերան։

— Հետո... Հետո ինչ պարզվեց։

Ոսեփը լուռ եր. նա մի թուղթ հանեց բաճ-

կոնի զրպանից և նստեց սեղանի մոտ։ Վերդինը  
մոտեցավ, նայեց ամուսնու աչքերին ու թևը  
բռնեց։

— Դե, ասա, ինչու ես լոռմ... Ասա  
պարզ, մի վախի—ամեն բան մտքովս անցել ե,  
այնպես վոր վոչ կը վախենամ, վոչ կուշաթափ-  
վեմ... Մի վորե ե հանցանք ունե՞ն, թե... Հը...  
Ոսեփը գլուխը բարձրացրեց ծանրությամբ։

— Անմեղ չեն։

— Միթե... Լավ. ինչումն ե մեղքները։ Հը։  
դու լոռմ ես ելի... Լավ. ասենք մեղավոր են,  
հետո ի՞նչ արիք։

— Այն, ինչ վոր պետք եր։

— Այսինքն։

— Հանցանքին համապատասխան պատիժ։

Վերդինը ժպտաց թերահավատ ժպիտով և  
նազանքով փարվեց մարդուն. — դու հանաք ես  
անում. չեմ կարող հավատալ, վոր նրանք մի  
բան արած լինեն և դուք ել...»

— Արել են և այն ել շատ վատ բան, —  
խոսեց Ոսեփը հանկարծ չոր, սառը ձայնով, վոր  
կարծես իրենը չլիներ։

Թերահավատ ժպիտը սառավ Վերդինի  
շուրթերին և նա ինչ-վոր սառնություն զգաց իր  
սրտում իր շուրջը. կարծես մեկը սառը ձեռքով  
բռնեց սիրտը. կողքին կարծես կանգնած եղ

ոտար մի մարդ, վոր չեր ուզում հասկանալ ի-  
րեն և ինքը չեր հասկանում նրան։ Մարդու ձայ-  
նից զգաց, վոր վատ բան ե կատարված, վոր յեղ-  
բայրները մեղաղրվում են ծանր հանցանքի մեջ։

— Նրանց հանցանքը՝, — հարցրեց դողացող,  
գրեթե կերկերուն ձայնով. — Ի՞նչ ե նրան հան-  
ցանքը…

Ոսեփը լուռ եր, Այդ լոռությունը Վերդինին  
թվաց խորհրդավոր, նույնիսկ չարագուշակ. նշա-  
նակում ե՝ կատարվել ե մի վատ բան։

— Դուք դատապարտեցիք նրանց, հարցրեց  
այլայլված։

Ոսեփի պատասխանը հնչեց պողպատի պես.

— Այս։

Վերդինը կանգնած տեղը ուղղվեց և խորը,  
սրտի խորքից շունչ քաշեց. նրա կուրծքը բար-  
ձըրանում եր՝ իջնում՝ բարձրանում եր, իջնում.  
ուզում եր հարցնել. ինչ պատիժ, վախենում եր  
պատասխանը լինի սարսափելի, ուստի իրեն  
հավաքեց և, կարծես իրեն արիություն ներշն-  
չելու համար, հարցրեց թերահավատությամբ.

— Գնդակահարե՞լ…

Ոսեփի ձայնը հնչեց դարձյալ պողպատի պես.

— Այս։

Այդ «այս»-ն նման եղ միաժամանակ մուր-  
ճի հարվածի, վոր իջավ կարծես Վերդինի գլւ-

խին, բայց Վերդինը նրանից չըցնցվեց անգամ։  
Մնաց անշարժ կանգնուծ և լռեց։

Նա զարմացած էր, հանկարծակի յեկած։  
Լռեց մի վայրկյան մարդու յերեսին նայելով,  
այնպես, ինչպես նայում են ոտար, թշնամի  
մարդու՝ պաղ, զննող նայվածքով, ապա դիմեց  
նրան խուլ ձայնով։

— Իսկ ի՞նչ ասավ քո խիղճը, — հարցրեց նա  
նույն պաղ, զննող նայվածքը մարդու յերեսին։

Ոսեփը, զգալով կնոջ հայացքն իր վրա, աշ-  
քերը բարձրացրեց և նայեց նրան։

— Իմ խիղճը հանգիստ ե, ասավ հանդարտ,  
անվրդով, անայլայլ։

Վերդինն աչքերը չոեց մարդու վրա. նա  
այդքան սառն, անտարբեր պատասխան չեր ըս-  
պասում մարդուց։

— Հանգիստ, — ասավ նա առժամյա լոռւ-  
թյունից հետո, հեղնախառն դառնությամբ։ —  
Հանգիստ...

— Այս, — կրկնեց Ոսեփը առանց գլուխը  
բարձրացնելու, ձեռի թղթի ընթերցումով ըգ-  
բաղված։

Վերդինը, առաջվա պես, աչքերը չոած մի  
վայրկյան նայեց մարդու յերեսին, նայեց զննող  
հայացքով, կարծես նրա դիմագծերն ուսումնա-  
սիրելու համար, նայեց, նայեց և, հանկարծ,

մեկեն պոկվեց տեղից ու անցավ մյուս սենյակը։  
Մի քանի ըռպեյից դուրս յեկավ այնտեղից  
շալը թևին քցած։

— Դե, մնաս բարով, ասավ արագ, դառնորեն։  
Ոսեփը գլուխը բարձրացրեց։  
— Ո՞ւր, — հարցրեց նորից հանդարտ ու ան-  
այլայլ։

— Յես չեմ կուրող ապրել մեկի հետ, վորի  
ձեռներն արյունոտ են, — ասավ Վերգինը, յերկու  
քայլ արավ և նորից կանգ առավ, ասես մի ծա-  
նր խոսք ասելու, բայց փոշմանեց և զնաց դե-  
պի դուռը։ — Մնաս բարով։


— Բարի ճանապարհ, պատասխանեց Ոսե-  
փը միևնույն տեղը նստած, թուղթը ձեռին և  
լսեց, թե ինչպես կինը իջնում եր սանդուխով,  
ինչպես նրա կոշիկները զարկվում եյին քարե  
աստիճաններին. «Կըլէկ-կըլիկ, կըլէկ-կըլիկ»...

— Այդպես ել գիտեյի, — ասաց Ոսեփն ինքն  
իրեն։ — Բայց իմ խիղճը հանգիստ ե...


Ասավ և շարունակեց թղթի ընթերցումը։  
Իսկ դուրսը ցերեկվա քամին բուք դարձած՝  
վոռնում եր փողոցներում ու վզզում քաղաքի  
գլխին...

U.S. GORGE  
Lumber Supply Corp

- |  |    |                |
|--|----|----------------|
| 1. Տեղիք ՄԱՐԴԻԿ, պատմվածքների ժող. (սպառ.) | 75 | կուլ.          |
| 2. ՑԱՆԿԱՊԱՏ                                | »  | » 2-րդ հրատ.   |
| 3. ՊԱՏԵՐԱԶՄԸ                               | »  | » . . . 75 »   |
| 4. ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ                          | .  | . . . . . 40 » |
| 5. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՂՋԻԿԸ                        | .  | . . . . . 50 » |



[1n. 504.]



ԳԻՆԸ 40 ԿՐՊ.

ՄԵԿ ՕՐԻՆԱԿ

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

„ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՑԱԼ ԳՐՔԵՐԸ

### ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

1. Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ—Շանոթներ, ժողովածու:
2. ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ—Ժամանակակից Մելոդրամ:
3. ԱՏ. ԶՈՐՅԱՆ—Հեղկոմի Նախադպհնել:
4. ԱՏ. ԶՈՐՅԱՆ—Գրադարանի Աղջիկը:

### ՄԱՆԿԱԿԱՆ

5. ԱՏ. ԶՈՐՅԱՆ—Ելեքտրական Լամպը, պատկերազարդեց  
Մ. Արուտչյան, դռնատիպ:

### ԹԻՍՈՒՄԱՍԻՐԱԿԱՆ

6. ԲԱԴ. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆ—Արսեն Թոխմախյան: Հավելված.—Առաջին գաղափարական ավազակը հայոց մեջ.—Մերկեկուլարի Տեղ-Մզրախ. 1791—1792 թ. թ.:





ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0062250

A  
I  
18509